ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի, Մյասնիկովսկու շրջանի վարչակազմի /ադմինիստրացիայի/ և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի միջև եղբայրական կապեր հաստատելու մասին.

Ռուսաստանի Դաշնության, Ռոստովի մարզի Մյասնիկովսկու շրջանի ղեկավարությունը ի դեմս Մյասնիկովսկու շրջանի ղեկավար Ա.Մ.Պորկշեյանի, գործող ,,Մյասնիկովսկու շրջան,, մունիցիպալ կրթության կանոնադրության հիման վրա, և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանը ի դեմս քաղաքապետ Գ.Ս.Մուրադյանի, գործող ,,Հայաստանի Հանրապետության Արրաատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմ,, համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա, ձգտելով ընդլայնելու և ամրապնդելու բազմակողմի կապերը, ցուցաբերելով բարի կամքի, լիիրավ փոխշահավետ համագործակցության դրսևորումներ, որոնք բխում են բնակչության շահերից, ձեռք բերեցին պայմանավորվածություն ներքոհիշյալի մասին:

Հոդված 1.

Հաստատել եղբայրական հարաբերություններ Ռուսաստանի Դաշնության, Ռոստովի մարզի Մյասնիկովսկու շրջանի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի միջև, որը կգործի իրենց լիազորությունների սահմաններում՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների, միջազգային իրավունքի համընդանուր չափանիշների պահպանմամբ:

Հոդված 2.

<u>Կողմերը</u> կնպաստեն առևտրատնտեսական և մշակութային փոխշահավետ համագործակցության ընդլայնմանը, ձեռնարկատիրական գործունեության զարգացման պայմանների ապահովմանը, ի նպաստ մրցակցային ապրանքատեսակների արտադրության հնարավորությունների մաքսիմալ օգտագործման:

Հոդված 3.

<u>Կողմերը</u> հաստատում են առևտրատնեսական հարաբերությունների զարգացման, հեռանկարային միջոցառումների պլանների համատեղ իրականացման անհրաժեշտությունը, առևտրատնտեսական, կրթության, մշակութային, էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանման, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և տուրիզմի բնագավառներում:

Հոդված 4.

<u>Կողմերը</u> իրենց լիազորությունների շրջանակներում և տնտեսական համագործակցությունների ուղիների ընդլայնման նպատակով, պլանավորում են /նախատեսում են/ պատվիրակությունների, աշխատանքային խմբերի փոխայցեր մունիցիպալ կրթության և գործարար շրջանակների ներկայացուցիչների կազմով: Կողմերը կատարում են փորձի փոխանակում ձեռնարկատիրության և անհատական նախաձեռնության զարգացման ուղղությամբ:

<u>Կողմերը</u> իրականացնում են ներդրումային նախագծերի ծրագրերի

նախապատրաստման և ռեալիզացման համատեղ իրագործման համագործակցությունը: Կազմակերպում և աջակցում են **Կողմերի** ձեռնարկությունների արտադրանքի ցուցահանդեսների և տոնավաճառների անցկացմանը:

Հոդված 5.

Կողմերը աջակցում են կապերի զարգացմանը սոցիալական մշակույթի բնագավառում, խրախուսում են թատերական խմբերի, թանգարանային նմուշների, ստեղծագործական խմբերի, սպորտային պատվիրակությունների փոխանակման և գեղարվեստական ցուցահանդեսների, կոլեկտիվների և անհատ կատարողների հյուրախաղերի, մասսայական սպատային միջոցառումների անցկացմանը:

Տուրիզմի երկկողմանի զարգացման նպատակով **Կողմերը** աջակցություն են ցուցաբերում համատեղ նախագծերի իրականացման գործում:

Հոդված 6.

Կողմերը մտադիր են համատեղ երկկողմանի խորհրդատվության և բանակցությունների շրջանակներում, հիմնված փոխհամաձայնության վրա, լուծել հարցեր, որոնք կառաջանան գործող պայմանգրի իրականացման ընթացքում:

Հոդված 7.

Կողմերը կարող են կազմել համագործակցության տարբեր ուղղություններին առընչվող արձանագրություններ և համաձայնագրեր, որոնք կոնկրետացնում են սույն Պայմանագիրը:

Հոդված 8.

Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է առաջարկել փոփոխություններ կամ լրացումներ կատարել սույն պայմանագրի մեջ:

Փոփոխությունները կամ լրացումները ձևակերպվում են լրացուցիչ արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անկապտելի մասը:

Հոդված 9.

Սույն պայմանագրի ազդեցությունը կարող է դադարեցվել /ուժը կորցրած ճանաչվել/ **Կողմերից** յուրաքանչյուրի միջոցով, մյուս **Կողմին** մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացմամբ:

Կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, ունի իրավական հավասարազոր ուժ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ	ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶ, ՄՅԱՆԻԿՈՎՍԿՈՒ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄ՝
Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ	Ա.Մ.ՊՈՐԿՇԵՅԱՆ
„01„ 12 2013թ.	„01„ 12 2013թ.